

ՄԻԵՏՄԱՔԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 24 ՓԵՏՐՈՒԱՐ, 1929

ԹԻԻ 4

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ԿՐՕՆՔԻՆ ՀԻՄՆ (3)

Բարոյականութիւն և Կրօն

Մարդիկ հեղինակութիւնը իբր կրօնքի հիմ մերժած և բանականութիւնը պաղ և ամուլ գտած ըլլալով՝ դարձած են գէպ ի բարոյական նկարագիրը եւ վարքը, զայն նկատելով իբր էական հիմնական բան մը: Անոնք ըսած են թէ կրօնքի նշանակէտն է բարի կեանքը: Կրօնքի և կրօնական գաստիարակութեան նպատակն է նկարագրի կազմութիւնը: Կրօնական կեանքի մէջ էական բանը ծառայութիւնն է: Կրօնքի առանցքն է բարի կամեցողութիւնը: Կրօնքը գաղափարականներու հետապնդումն է: Ծջմարիտ Բրիստոնէութիւնը Լիւրան Քարոզին փորձարկումն է: Մէկուն կրօնական ըլլալը կը յայտնուի ոչ թէ երբ ան հեղինակութեան կը հնազանդի, կամ կարծիքի մը վրայ հաստատ կը մնայ, այլ երբ գաղափարական մը հաւատարիմ կը գտնուի գործնականապէս:

Ահա այսպէս կ'ըսեն՝ իրենց գաղափարներուն մէջ ուրիշ կերպով իրարմէ մեծապէս տարբերող մարդերը: Այսպէս կ'ըսեն փիլիսոփաները, որոնց համար կամքը և գործը իրական բաներ են

մարդկային կեանքի մէջ: Այսպէս կը ըսեն գործի տէր մարդերը, որոնք կը ըսեն թէ կրօնքը գործնական արդիւնքներ պէտք է ունենայ: Այսպէս կ'ըսեն քրիստոնեայ չկոչուողները, որոնք կը յայտնեն թէ իրենք գոհ են երբ լաւագոյնը ընելու աշխատին: Տակաւին ուրիշներ կ'սն որոնք իրենց այս կարծիքը փաստելու համար Ս. Գրքէն մէջըրբումներ կ'ընեն: «Տէրը քեզմէ ի՞նչ կը պահանջէ, բայց միայն իրաւունք ընել, ողորմութիւն սիրել ու խոնարհութիւնով քու Աստուծոյդ հետ քալել:» Միքիա 6. 8: «Մաքուր կրօնասիրութիւնը այս է որբերուն և որբեւարին երուն տես երթալ իրենց նեղութեան ատենը, ու անձը անարատ պահել աշխարհէ:» Յակոբոս 1. 17:

Կրօնքի մասին այսպիսի տեսակէտ մը քննութեան կը կարօտի, թէպէտ ան շատ մը գործնական և ուժեղ մարդերու համար հրապուրիչ կ'երեւայ: Եթէ ան հիմնական կը նկատուի լուրջ վտանգներ յառաջ կը բերէ. քանզի, կարճ կերպով ըսելով, այն կեանքը որ կրօնքի արդիւնքը պէտք է ըլլայ, կրօնքին հիմը կ'ըլլայ:

1. Այս կարծիքը կը փորձուի բարոյականութիւնը կրօնքին տեղը դնել: Տիրող գաղափարը բարութեան գաղա-

փարն է: Կրօնական ըլլալ կը նշանակէ տեսակ մը բարի ըլլալ: Մարդը Աստուծոյ հանդէպ պարտականութիւններ ունի, ինչպէս նաեւ մարդերու հանդէպ: Կրօնքը բարոյագիտութեան մէկ մասը կը նկատուի: Կրօնքը բարոյականութեամբ փոխանակել իր վերջին ելքը հասեր է այն տեղ, ուր կրօնական կազմակերպութիւններու տեղը զրաւելու համար Բարոյական Զարգացումի Ընկերութիւններ հաստատուած են:

2. Ահա այս հիմնական ըմբռնումէն յառաջ կուզան այն բոլոր հետեւութիւններն ու համոզումները՝ որոնք կ'ընկերանան կեանքի մասին հոգեւոր տեսակէտին հակառակող բարոյական տեսակէտին: Մարդուն գործն է զլիաւոր բանը, ոչ թէ Աստուծոյ շնորհքը: Մարդը արժանիքի կը տիրանայ իր գործերով, որոնց համար պիտի վարձատրուի: Մարդն է որ պէտք է ազատէ ինքզինքը: Արդարութիւնն է Աստուծոյ գործողութեան հիմը: Աստուած մարդու հանդէպ արդար, այսուհանդերձ, ողորմած պիտի ըլլայ: Այսպէս կրօնական կեանքը օրինադաշտ կ'ըլլայ, մտղղը դարձեալ կը մնայ օրէնքի տակ:

3. Այս տեսակ գաղափարի մը՝ մէկու մը՝ Քրիստոսի մասին ունեցած տեսակէտին հետ ունեցած յարաբերութիւնը շատ կարեւոր է: Բարի ըլլալու այս ճիգին մէջ Յիսուս մեր Ուսուցիչը, մեր Օրինակը, մեր Առաջնորդը կ'ըլլայ: Ան մեր առջև գաղափարականը դրած է և մենք կ'աշխատինք Անոր հետեւիլ. այսինքն, կը ճգնինք բարոյապէս Անոր նըմանեալ գաղափարականին հասնիլ:

4. Այս գիճելի հարցին մէջ բաժանման գիծերը շատ խորունկ են: Բարութեամբ բարութիւնը կը կուրացնէ մեր աչքերը. և մենք չենք հասկնար որ բարոյական կեանքը հոգեւորին տեղը կը զենենք. առաջինը արդիւնք մ'է, իսկ երկրորդը՝ ոյժ և պատճառ: Մէկը կըր-

նայ հարցնել թէ բարձր գաղափարականէն, Քրիստոսի գաղափարականէն աւելի զեհ և ազնիւ ի՞նչ կրնայ ըլլալ: Ասոր պատասխանը ուրիշ մէկ հարցումի մը մէջ կը գտնուի. Յիսուս էապէս այս բարոյական գաղափարականներով կը հետաքրքրուէր թէ բոլորովին տարբեր տեսակէտէ հարցերով, այն հարցերով որ կը վերաբերին Աստուծոյ հետ յարաբերութեան մասին, որմէ ոյժ կը բղխի և որ կեանքը կատարեալ կ'ընէ:

5. Իայց կան մարդիկ որ կ'ըսեն թէ գաղափարականները, ծառայութիւնը, նկարագիրը կրօնական իրականութիւններ են արդարեւ, և թէ անցեալին մէջ չէ հասկցուած այս, թէ վերջապէս հիմա ճշմարտութիւնը հասկնալի եղած է: Անտարակուսելի է որ ճշմարիտ կրօնքը պիտի արտադրէ գաղափարականներ. բարձր նկարագիր և ազնուահոգի ծառայութիւն: Իայց Հարվերտ Համալսարանի փրօֆէսորներէն փրօֆ. Հօքինիլի որ ներկայիս փիլիսոփայութեան մէջ առաջնորդներէն մէկը, և որուն բարձր գաղափարականներու ծառայելը ամէնուն ծանօթ է, մէջբերում մը գտնացուցիչ պատասխան կրնայ ըլլալ: «Անկարելի է որ բարոյական գաղափարապաշտութիւնը կրօնքի տեղը կարենայ բռնել, քանզի անոր կը պակսի պաշտօն մունքի տարրը:» Ժ. Է. ՄԷՐԸԼ

ԲԱՆԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՇԱՐժՈՒՄ

Ի՞նչ է այն տարրը որ մեծագոյն ազդեղ եղած է աւետարանական շարժումի ծագումին եւ անոր չորս հորիւրամեայ կեանքին ընթացքին մէջ: Այն էապէս մտաւորական շարժում մըն էր թէ հոգեւոր, եւ թէ ներկայիս ի՞նչ է գայն բնորոշող յատկանիշը: Ասոնք հարցեր են՝ որ ամօքնայն կը շահագրգռեն անաչառ պատմագիրը ո՞րքան իւրօքանիւր աւետարանականը:

ԺԶ. դարու աւետարանական բարեկարգութեան նախակարապետները ԺԱ. դարէն սկսեալ իրենց որոշ բաժինը բերած են այս շարժումին, որ տարբեր ընթացք տուած է պատմութեան: ԺԴ. և ԺԵ. դարերուն մէջ յառաջ եկած և զարգացած է հիւմեկնիզմ կոչուած շարժումը, որ իր կարգին նաև մեծ բաժին մը ունեցած է բարեկարգութեան մէջ՝ իբր նախապատրաստական ազդակ: Հիւմեկնիստները ուսումնական արթնութեան առաջնորդները հանդիսացան: Անոնք փնտռեցին և գտան նոր յունական ձեռագիրներ, ուսումնասիրեցին հելլենական գրականութիւնը. և այս կերպով յաջողեցան զօրաւոր հոսանք մը յառաջ բերել դարուս ազդեցութեան, կրօնական աւելորդապաշտութեան և տիրող դպրոցական աստուածաբանութեան (սֆորաքսիսիզմ) դէմ: Գերմանիոյ մէջ հիւմեկնիստները՝ ուսումնասիրելով Ս. Գրքի երրայական և յունական բնագիրները՝ նոր թափ և նոր ուղղութիւն տուին վերադարձումին այս շարժումին իրենց երկրին մէջ: Ասոր իբր արդիւնք՝ եկեղեցական կարգերու և կրօնական ըմբռնումներու դէմ մեծ զժգոհութիւն մը ծաւալ գտաւ Եւրոպայի շատ մը երկիրներուն մէջ:

Բայց այս շարժումը էապէս մտաւորական շարժում մ'էր, հետեւաբար կրօնական մարդին մէջ անոր ազդեցութիւնը քանդիչ եղաւ: Մտքին լուսաւորուելովը շատ մը կրօնական հաւատալիքներ, պաշտօններ հիմէն կործանեցան: Բայց կրօնական նոր կեանք մը ստեղծելու մէջ այս շարժումը անկարող հանդիսացաւ: Հռչակաւորն Եւրասիոյ կ'ըսէր. «Բարեկարգութիւնը ո՛չ իմ գործս է ո՛չ ալ՝ իմ նմաններուս»: Այս շարժումին կը պակսէր այն հոգեւոր շինիչ ոյժը, որ բարեկարգիչներու մեջ երեւան եկաւ: Ի՞նչ էր ասոր գաղտնիքը:

Եկեղեցական բարեկարգութիւնը է-

ապէս հոգեւոր շարժում մ'էր. ան ուղղուած էր՝ ժամանակին կրօնական աւելորդապաշտութիւններէն և հաւատալիքներէն աւելի՝ ազատ բարոյականութեան և հոգեւոր ինկածութեան դէմ: Պէտք էր մտ'ըզը վերանորոգուէր, վերաստեղծուէր, որուն միակ միջոցն էր անհատական հաւատք Բրիստօսի վրայ:

Լուտեր այս պատք քաղեց իր խիստ փորձառութենէն: Այս հոգին շարժարւոյ վանականը չկրցաւ իր սրտին խաղաղութիւնը գտնել, մինչեւ որ ան չըկըրցաւ վայելիլ փրկութեան երաշխիքը իր հաւատքին միջոցաւ: Եթէ բարեկարգիչները միայն մտաւորապէս լուսաւորեալ մարդեր ըլլային բարեկարգութիւնը անյաջողութեամբ պիտի վերջանար: Հոգեւոր շարժում մը կրնայ ասորից միայն հոգեւոր անձերու միջոցաւ:

Աւետարանական եկեղեցիին պատմութեան մէջ մենք կը գտնենք այնպիսի շրջաններ երբ այս հոգեւոր շարժումը ուժգին թափ մ'առած է, յառաջ բերելով հոգեւոր արթնութիւններ, որոնց բարեբար ազդեցութիւնը չէ սահմանափակուած միայն աւետարանական համայնքներու մէջ: ԺԸ. դարու հոգեւոր մեծ արթնութիւնը, Ուէսլիի միջոցաւ, ամբողջ Բրիտանիոյ ինկած բարոյականութիւնը վսեմացուց: ԺԹ. դարու մէջ Մաւտիի միջոցաւ յառաջ եկաւ մեծ արթնութիւն մը, որուն ազդեցութիւնը մինչև այսօր զգալի է Ամերիկեան եկեղեցիներու մէջ:

Այսպէս այս շարժումը իր ծագումէն մինչև հիմա հոգեւոր եղած է բնոյթով. և եթէ եղած են շրջաններ, երբ մտաւորական զարգացումը և բանապաշտութիւնը զգալի կերպով յառաջ գացած է, ստուերի մէջ ձգելով հոգեւոր զարգացումը, այն ատեններ երբ մտքին գերսնանկովը հոգին անօթի մեռնելու վտանգին մէջ տեսնուած է, հոգեւոր շարժումը, իբր անոր հակազդեցութիւնը, երևան

եկած է: Այսպիսի վայրկեաններէն մէկը կ'ապրի Աւետարանական եկեղեցին ներկայիս, երբ հիմնապաշտը (ֆրոնսկինսքիսք) և արդիապաշտը (նոսթրէիսք) երկու ծայրահեղ հոսանքները, Եւրոպայի մանաւանդ Ամերիկայի եկեղեցիներուն մէջ բուռն վեճերու և վրդովումի պատճառ կ'ըլլան: Հիմնապաշտութիւնը էապէս ուժգին հակահոսանք մըն է հրապարտ, լուսամիտ, բայց հոգեւորապէս ամուլ արդիապաշտութեան դէմ: Հիմնապաշտութիւնը քաղցած հոգիին բողոքն է անողի բանականութեան դէմ: Եւ արդիապաշտութիւնը տեղի տուած է այս պայքարին մէջ:

Աւետարանական շարժումը հայերուն մէջ նոյնպէս տեւի հոգեւոր արթնութիւն մ'էր քան թէ մտաւոր: Ժիւղէ է որ աւետարանականութիւնը սկիզբէն ի վեր ունեցած է մեր մէջ կրթական բազմաթիւ հաստատութիւններ, որոնք լուսաւորած են ամբողջ հայութիւնը. բայց անոնց ուղղութիւնը և նպատակը միշտ եղած է հոգեւոր. և մտաւորական կրթութիւնը նկատուած է իբր օժանդակ լրացուցիչ ոյժ մը հոգեւորականութեան: Որչափ որ կարելի է ըսել, Հայ Աւետ. Եկեղեցիին իր ամբողջ պատմութեան միջոցին հազիւ անգամ մը, 70-ական թուականներուն, խնդիր մը ունեցած է Քրիստոսի քաւչական փրկագործութեան մասին: Իսկ հիմնապաշտի և արդիապաշտի վեճը երբէք խնդիր չէ եղած Արեւելքի Հայ Աւետ. Եկեղեցիին մէջ:

Ըսել թէ աւետարանականութիւնը չեղած է ուղղափառ դաւանանքէն, թէ ներկայիս ան բանապաշտ է և կը միտի դէպ ի միադաւանութիւն առնուազն կը նշանակէ երեւոյթները ճիշդ չտեսնել: Աւետարանականութիւնը եղած է և է հոգեւոր շարժում մը, որուն գերազոյն նպատակը եղած է քրիստոսանման կեանքի մը ստեղծումը, միայն հաւա-

տալով Անոր Աստուածային փրկագործութեան:

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԸՆՏԱՆԻՔԸ՝ ՍԻՐՈՅ ԳՊՐՈՅ*

Սիրով արևսացած եւ հաստատուած:

Եփես. 3. 17:

Այս համարը, սիրով արևսացած եւ իր ամբողջ սնունդը հողէն քաշող ծառի մը եւ սիրոյ անզրկուելի ժայռին վրայ հաստատուած տան մը կրկնակ պատկերով, ըստ իս սքանչելի կերպով կը բացատրէ թէ ի՞նչ ըլլալու է ընտանիքը, — Զբօսանք մը չէ ան, ոչ ալ տաժանք մը: Ո՛չ իսկ առեւտրական ընկերութիւն մը, այլ դպրոց եւ սիրոյ դպրոց մը, որ պէտք է մեզ պատրաստէ կեանքի մեծ դպրոցին, որ ան ալ իր կարգին՝ սիրոյ դպրոց մըն է: Ես կեանքին մէջ չեմ տեսներ ուրիշ նպատակ մը որ ամէն մէկուն առաջադրուած ըլլայ եւ անոր տայ ա՛յնքան արժէք զոր կուտայ աշակերտութիւնը յաւիտենական կեանքի, սիրոյ կեանքի, և կամ աստուածային կեանքի: Աստուծոյ պատկերովը ստեղծուած ըլլալով՝ պէտք է միշտ աւելի նմանինք Անոր. և քանի որ Ան ամէն բանէ առաջ սէր է, մենք ալ սիրով է որ կրնանք Անոր նմանիլ: Եւ ասոր համար ընտանեկան կեանքէն լաւագոյն դպրոց չկայ: Եթէ ներկայիս ահարկու ճգնաժամ կ'անցնէ ան, պատճառը այն է որ խիստ յաճախ անձնասիրութիւնը զրաւած է սիրոյ տեղը:

Պէտք չէ դարմանանք ասոր, քանզի եթէ մէկ կողմէն դիւրին է ընտանիքին ծոցին մէջ զիրար սիրել, քանի որ անոր անդամները շատ մօտ կ'ապրին իրարու եւ մէկգլխեկու մաս կը կազմեն, միւս կողմէն սիրելը հոն դժուար է, կըրկին անոր համար որ անոնք իրարու շատ մօտ ապրելով զրեթէ անխուսափելի են ընդհարումները: Անձնասիրութիւնը դիւրաւ երեւան կուգայ հոն եւ կ'սպառ-

տրուած են, որ զայն երկրագործական նպատակներու համար պիտի դորձածէ երկրագործական ուսում տարածելու համար իր տեղին մէջ: (Մր. Այսլի և Մր. Փէնս այս գործին վարիչներն են ներկայիս:) Վարչութիւնը իր Յունվարի նիստին մէջ յետպատերազմեան նոր պայմաններու համեմատ Գոլէճի բարեփոխեալ սահմանադրութիւնը վերջին անգամ նորէն աչքէ անցուցած է եւ անոր մէկ օրինակը խնամակալ Մարմինն ներկայացուցած է: Իսկ Գոլէճի մը ամբողջական ուսումնական ծրագիրը պատրաստուած է, որ պիտի ներկայացուի Սուր. կառավարութեան: Վարչութիւնը մեծապէս զոհ մնացած է Ամերիկայէն յայտնուած այն փափաքէն, որուն համեմատ կ'առաջարկուի այդ երկրին մէջ Ուսումնաւարտներու Միութիւն մը կազմել, և Փրօֆ. Յ. Գ. Գրիգորեանէն խնդրած է որ Ֆիլատէլֆիոյ և Նիւ Եօքքի ուսումնաւարտները այս նպատակաւ հաւաքոյթի մը հրաւիրէ: Նոյն ժողովին մէջ խորհրդակցութեան նիւթ եղած է Սուրբ Սուրբ. Միութեան կողմանէ որոշուած նոր հանգանակութեան մը ձեռնարկումը: Վարժարան կը յաճախեն 195 աշակերտներ, գիշերօթիկներու թիւն է 23: Այս տարի Արաբերէնի և Ֆրանսերէնի մէջ մասնաւոր յառաջացում մը զգալի է: Մանաւանդ Ա. և Դ. կարգի աշակերտներէն զատուած մաս մը Արաբերէնի մէջ պիտական ծրագրին համընթաց կ'երթան կանոնաւորապէս: Դպրոցիս բաժնոցին համար ստացուած են ելեքտրական նոր պէրլորինի, որոնք շատ լաւ կը գործեն: Ամէն երեքշաբթի և շաբաթ գիշերները բաժնոցով համերգներ կը տրուին բոլոր փափաքողներուն համար: Ուրախալի պարագայ մըն է նաև ուսանողական ամսաթերթի հրատարակութիւնը չորս լեզուներով, Ըռնվարէն սկսեալ:

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԱՇԽԱՐՀԻ ՄԵԾԱԳՈՅՆ ՀԵՌԱԳԻՏԱԿ

Արդի գրութեամբ հեռագրիտակը, որ լոյսը ետ կը ստացնէ գէպի գիտուող առարկան, առաջին անգամ հնարուեցաւ Սըր Իոհան Զեւտոնի կողմանէ 1672 ին: Նետոնի հնարած հեռագրիտակը երկու մատնաչափ տրամագծով հայելի մ'ունէր: 1920 ին շինուեցաւ 100 մատնաչափ տրամագծով հեռագրիտակ մը, որ ներկայիս մեծագոյնն է իր տեսակին մէջ և զետեղուած է Քալիֆորնիոյ Ուիլսոն Լերան գիտարանին մէջ: Սոյն գիտարանի պատասխանատու վարիչը, Տր. Ճ. Հէյլի, միջոցաւ և ուրիշ շատ մը գիտնականներու դործակցութեամբ պիտի շինուի հեռագրիտակ մը 200 մատնաչափ տրամագծով և 17 ոտք տրամագրիւմ ունեցող հայելիով: Ասոր հայելին պիտի շինուի հալած քուարց անուն քարէ, կլիմայի փոփոխութիւններէն մանաւանդ տաքութիւնէն չազդուելու համար:

Այս նոր հեռագրիտակով գիտունները կը յուսան կէս միլիոն նոր աստղեր զննել, քննելով և զատորոշելով շատ մը նեպոլանները կազմող լուսաւոր մարմինները: Ասով կարելի պիտի ըլլայ նաև աներեւակայելի հեռաւորութիւններ չափել, որ մինչև հիմա անկարելի եղած էր: 100 մատնաչափ հեռագրիտակով կարելի եղած է 840 միլիոն միլիոն միլիոն մղոն հեռու աստղերը տեսնել, որոնց լոյսը մեզի 140 միլիոն տարիէն կը հասնի: Բայց այս նոր հեռագրիտակով 5000 միլիոն միլիոն միլիոն հետո եղող աստղերուն լուսանկարը պիտի առնուի:

Է՛ն հետաքրքրական ծառայութիւնը չոր գիտունները կ'ակնկալեն այս հրաշալի գործիքէն, արեգակնային գրութեան մասին անոր կատարելիք յայտնութիւններէն պիտի բազկանայ: Արեւ մոլորակները մեզի ա'յնչափ պիտի

մօտենան, որ արևի, հրաթի և երեւակի շատ մը գաղտնիքները պիտի կարենան լուծուիլ:

ԱՇԽԱՐՀԻ ՄԵԾԱԳՈՅՆ ՕԳԱՆԱԻԸ

Հօս ԱՆՃԷԼՐԱ և Կրաֆ Ձեփելին օգանաւերը իրարմէ քիչ տարբերութեամբ մեծագոյն օգանաւերն են աշխարհի: Երկուքն ալ օժտուած են հինգական մեքենայով. Լ. Ա. ի երկարութիւնն է 658 ոտք, իսկ Կ. Ձ. ինը՝ 771. Երկրորդին տրամագիծը 10 ոտք աւելի երկայն է քան առաջինը:

Այս տարուան միջոցին Անգլիոյ մէջ պիտի լրանայ երկու նոր օգանաւերու շինութիւնը իւրաքանչիւրը 5,000,000 խորանորդ ոտք ծաւալով, ասոնք պիտի խլին առաջնութիւնը Կրաֆ Ձեփելինէն: Իսկ Միացեալ Նահանգներու մէջ պիտի շինուի ուրիշ երկու օգանաւեր, Կրաֆ Ձեփելինի ճիշդ կրկին ծաւալով. մէկը պիտի լրանայ 1931 ին իսկ երկրորդը 1932 ին: Այս Ամերիկեան օգանաւերը պիտի ունենան 785 ոտք երկայնութիւն, 132.9 ոտք տրամագիծ, 6,500,000 խորանորդ ոտք ծաւալ, ութը մեքենայ: Ասոնք պիտի գործածեն հէլիոսէ փոխանակ պայթուցիկ ջրածինի, և ծանր իւզ փոխանակ կազօլինի: Ասոնք սաւառնակներու մասնաւոր տեղ մը պիտի ունենան, ուսկից հինգ սաւառնակներ պիտի կրնան թռչք ասնել:

ՀԷԼԷՈՒՄԻ ԿԱԶԻՆ ՄԷԿ ՆՈՐ

ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Ծոգուն խորութիւնները սուղոյները ասկէ վերջը պիտի կրնան մի քանի անգամ աւելի արագ մինչև 600 ոտք խորը սուզիլ եւ ջուրին մակերեսը ելլել նոր գիւտի մը միջոցաւ: Օգին բազկացուցիչ տարրերէն բորակածինը կը հանեն և վայն կը փոխանակեն հէլիումի կաշով, որուն մասնիկները բորակածինի մասնիկներէն փոքր ըլլալուն համար արեւան մէջ աւելի շուտ կը ծծուին եւ աւելի

շուտ թռքերէն դուրս կ'ելլեն. այս կերպով 200 ոտք ջուրի խորութիւնէն փոխանակ երկու ժամէն միայն կէս ժամ, նկարելի կըլայ վեր ելլել:

ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱԿԱՆ ՀՐԱՇՍԱՒ

Լուսանկարչական նոր մեքենայ մը հնարուած է, որով կարելի է ունէ առարկային տարբեր կողմերը ցուցնող նկարներ ստանալ: Այս քամարայով առնուած մարդու լուսանկար մը եթէ ճակատէն դիտես պիտի տեսնես անոր գլուխը, իսկ եթէ կողմնակի դիտես պիտի տեսնես անոր մէկ երեսը:

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ԱՒԵՏԱՐԱՆԶԱԿԱՆ ՊՏՈՅՏ

Վեր. Ս. Մանուկեան հոգևոր ամուսն մէջ այցելեց Աղէքսանդրէթի շրջանին չորս եկեղեցիները: Աղէքսանդրէթի մէջ երկու շաբաթ ամէն գիշեր ազթաժողովներ կատարած, Ծնունդի արգիւ քարոզած, երկու պատիկներ մը կըրտուած, ինը նոր անդամներ ընդունած է, որոնցմէ երկու ուսուցիչներ ներթական ծանր վնասը աննկատ թողլով իրենց խանութները չեն բանար կիրակիները: Հանգէսներ սարքուած են Երեւանի և Ժողովական եկեղեցիներու Կ. Դպրոցներու կողմանէ: Ֆարթըսլի մէջ անցուած մէկ գիշերուան միջոցին երկու նոր անդամներ ընդունուած են:

Պէլլանի եկեղեցիին մէջ, որուն առժամայ քարոզիչն է Տիար Յովհ. Շնորհօքեան, ութը նոր անդամներ ընդունւած, չորս անդամներ իրենց ուսուցիչներէն ընդունւած, մէկ միւսութիւն կատարուած է: Եկեղեցիին հոգևոր մակարդակը սկսած է բարձրանալ:

Գլըզլիսանի մէջ մէկ նոր անդամ ընդունուած և վեց պատիկներ միւստուած են: Հոս եկեղեցին ցաւալի կորուստ չը ունեցած է յանձին Տիար Գևորգ Ժիվէլէքեանի, սիրտած ժամկոչին, որուն

մահը ամէնունցաւ պատճառած է: Սին-
դանի, օրինակելի քրիստոնեայ կեանք
մ'ապրած էր հանգուցեալը:

Տիկ. ՄէննոիՇ ձեղէճեան

Այլի Տիկ. Մ. ձեղէճեան, կինը հան-
դուցեալ Յովհ. ձեղէճեանի, իր մահ-
կանայուն կնքեց իր օրդուոյն Տոքթ. Ա.
ձեղէճեանի բնակարանը, Հալէպ, Փետր.
7 ին, իրիկուան ժամը 6.30 ին, Փետր.
4 ին պատահած կաթուածին իրր ար-
դիւնքը: Տիկ. Մ. ձեղէճեան ծնած է
1849 ին, Այնթապ, ուր Ամերիկեան Աղ-
ջըկանց Աէմլնէրիի երկրորդ տարւումն
շրջանաւարտներէն եղած, 17րդ. տարի-
քին մէջ ամուսնացած է Տրար Յ. ձե-
ղէճեանի հետ, մայրը եղած է 10 գա-
ւաղներու, որոնցմէ ներկայիս ունի 13
թոռներ: Յիսուսը հինգ երկար տարի-
ներ, մինչեւ 1920, իր էրկանը հետ ա-
մուսնական երջանիկ կեանք ապրած է,
ըլլալով օրինակելի ամուսին մը եւ տի-
պար մայր մը: Կանուխէն շուրջուցած
է կրօնասիրական միտումներ, 16 աւ-
րեկանին ունեցեր է զարծի փորձառու-
թիւնը, 40 ին սկսած է աւետարանչա-
կան գործունէութեան: Երկար առեւ
Կ. Դպրոցի վարժուհի, Ա. Դրքի կանո-
նաւոր ընթերցող մը եւ ջերմհոանդ ա-
ղօթող մ'եղած է: Իր խիստ ձեռքովը
հիւսած 30 ի չափ ասեղնագործի կտոր-
ներ ծախած է անոնց փոխարմէքը աւե-
տարանչական նպատակներու գործածե-
լու համար: Իր բարեմասնութիւններէն
եղած է նաեւ տեւական կանոնաւորու-
թիւն՝ համեմուած սիրարոյր համբերու-
թեամբ եւ քաղցրութեամբ:

Յուզարկաւորութեան հանդէսը կա-
տարուեցաւ Արիզոնէի Հայ. Աւետ. Եկե-
ղեցիին մէջ, Փետր. 8 ին, խոսն բաղ-
մութեան մը ներկայութեան: Դամբա-
նականներ խօսեցան Վեր. Կ. Յարու-
թեան, Վեր. Ս. Մանուկեան եւ Տօգթ.
Ճ. Է. Մէրըլ: Մեր ցաւակցութիւննե-
րը հանգուցեալին պարտզաներուն:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ԲԱՆՃԱՐ ՊԱՊՈՒԻ ՊԱՏՄՈՒԹԻԻՆԸ

Պապու իր դպրոցը շարունակեց. ի
սկզբան թէեւ մեծ զժուարութիւններ ու-
նեցաւ, բայց երթալով վարժեցաւ, եւ
քիչ շատ բարեփոխուեալ: Տասուեր-
կու տարեկան եղած ատենը կապերաի
գործարանը գրուեցաւ, ուր իր բանտի
փորձառութեան շնորհիւ արագ արագ
յառաջգիւմեց: Օրական 25 սէնթ վարձք
կ'ստանար. ու ասիկայ իշխանական
կոչուելու չափ մեծ բան մ'էր Պապուի
համար: Ժամանակ մը այսպէս շարու-
նակելի վերջ գիշերային դպրոց գնաց,
եւ հոն սքաութ (արի) եղաւ: Զինքը ա-
զատող լաւիկը սքաութ ազոց պիտի էր.
եւ երբեք վաղանցի օրերը ան կ'առնէր
սքաութ ազալքը ու երկար պտոյտներու
կը տանէր գանոնք. հոն շատ հեռաքի-
քրական տեղեկութիւններ կուտար ա-
նոնց թոշուներու, ծառերու, ծաղիկ-
ներու, կենդանիներու, եւ օձերու մա-
սին: Պապու ամենէն շատ կ'ուրախա-
նար երբ անտառին մէջ մեծ կրակ մը կը
վառէին, ու անոր շուրջը նստած իրա-
ւու պատմութիւններ կը պատմէին, եւ
գիր կ'երգէին, կը խաղային ու այլ եւ
այլ կերպերով կ'զբօսնուին: Պապու
սատիճանարար կը փոխուէր. կեանքի
նոր տէսակէտներ ու փափաքներ ունե-
նալ կ'սկսէր. աւելի պարկեշտ էր եւ հա-
ւատարիմ. ու իր լաւիկը զոհ ընելով իր
մեծագոյն փառասիրութիւնն էր: Ան-
գամ մը երբ իր սքաութ ընկերներէն մին
իր ծունկը վնասած էր, Պապու շաղկեց
գոյն եւ ֆիւլիկն մինչեւ տուն բերաւ իր
կոնակին վրայ: Սախլը այդ ըրածին
համար զովեց գինքը, «կեցցէ՛», Պապու,
զու՛ն լաւ սքաութ մըն ես», ըսելով:
Այդ գիշեր Պապու ուրախութենէն չը
կրցաւ քնանալ, որովհետեւ Սախլը գինք
«լաւ սքաութ» կոչած էր:

Պապու տասնըեօթ տարեկան եղած

ատեն իր կեանքին ամենամեծ փորձութիւնը ունեցաւ: Իր հեռաւոր ազգակաճերէն մին, Մալիա, որ միեւնոյն գիւղը կը բնակէր, զինքը առանձին անկիւն մը տանելով՝ իրենց ցեղային երգումը կատարել տուաւ իրեն, այսինքն Պապուի խոստում ընել տուաւ որ յանուն իրենց ցեղի աստուածներուն իրեն վստահուած ուէ՛ գաղտնիք ուրիշին չը պիտի տայ:

Յայնժամ Մալիա ձայնը ցածցնելով ըսաւ Պապուին. — «Պապո՛ւ, քեզի խիստ կարեւոր խօսելիք մը ունիմ, ես այս կեանքէն ձանձրացայ. ինչ՛ է մեր կեանքը, գործէ՛, գործէ՛, գործէ՛, և վարձատրութիւն... ոչինչ: Եթէ ասանկ երթայ, մարդ ըլլալիք չունինք. ինչո՞ւ համակերպինք ասանկ ստրկութեան մը, երբ երկու ժամուան ծանր աշխատանքով մը կրնանք մէկէն հարստանալ: Հիմայ, ինծի նայէ», և ան զողութեան առաջարկ մը ներկայացուց Պապուին ճիշտ նման այն դէպքին՝ որ Պապուին բանտարկութեան պատճառ եղած էր անցելոյն մէջ — Անանոփուրի դատաւորին տունը մտնել և զոհարեղէնները զողնալ, — գլխաւոր պահակը փոքր կաշառքի մը փոխարէն խոստացած էր արդէն օգնել իրենց զոհարեղէններուն տեղը ցուցնելու. մասնաւոր գիշեր մը դատաւորը ընտանեօք պարահանդէս պիտի երթար, ամին բան նպաստաւոր էր, ու յաջողութիւնը ապահով:

«Սակայն անունները կարգացուելէն ետքը, երբ զոնները զոցուած են ինչպէ՞ս գիշերանց դուրս պիտի կրնաս ելլել», հարցուց Պապու:

«Խիստ պարզ է», պատասխանեց Մալիա, «երկաթ թիւերը կտրող գործիք մը ձեռք ձգած եմ, կէս գիշերէն ժամ մ'առաջ, երբ ամէն բան լուռ է, հետդ կ'ելլենք, մինչեւ թիւերու ցանկապատը կ'երթանք, ոչ ոք կը տեսնէ մեզ հոն, թեւերը կը կտրտեմ, դուրս կ'ելլենք, քա-

ղաք կ'իջնենք, դատաւորին տունը կը մտնենք, տանիլ կրցածնուս չափ կ'առնենք: Գետակին եղերքը ծառի մը տակ կը թաղենք զայն: Թաղելիք տեղերնիս առաջուց պատրաստած եմ արդէն: Անկէ ետքը կամայ մը կուգանք մեր եղած տեղէն ներս կը մտնենք, անկողիննիս կը հասնինք ու կը քնանանք: Առաւօտուն կտրուած թիւը ոմանց ուշագրութիւնը կրնայ գրաւել. ո՞վ պիտի ըսէ թէ մենք էինք դուրս ելլողները. ո՛չ ոք: Մէկ երկու ամիս վերջ՝ երբ ամեն բան մոռցուի, օր մը թաղած գանձերնիս կը հանենք, կը ծախենք, և մինչեւ մեր կեանքին վերջը մեզի բաւելու չափ մեծ հարստութեան մը տէրը կ'ըլլանք»:

(Շարունակելի)

ՓՈԽԱՆ ԸՆԿԱԼԱԳԻՐ

(Ի հաշիւ 1929ի բաժնեգիրներն)

Միա փէթըրսընէ, Հալէպ, 37.5 զրշ. արծթ., Տիւ. Կիւլեհիա Խաչերեանէ, Լօս Անճէլօս, 1.50 տոլար, Տիար Ներսէս Կիւզէլիմեանէ, Գահիրէ, 30 զրշ. եղպ., Տօքթ. Վարդան Փօլատեանէ, Հալէպ, Է5 զրշ. արծթ., Տիար Յակոբ Խարմանտեանէ, Մօնթէվիտօ, 1.0 տոլ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՐԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Կրօնիկն Հիւնը ՏՐ. Ճ. Է. ՄէրճԼԻ
Բանապաշտքիւն եւ Աւես. Ծարժում
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Ընթանիք՝ Սիրոյ Գպրոց.

Թրգ. Վ. ՊէկեԱՆ

Հալէպ ՓՐՕՖ. Զ. Ա. ՊէՋՃԵԱՆ

Մովսէս Երմէճ Խաչի

ՎԵՐ. ՅԿԻ. ՇՆՈՐՀՕՒԲԱՆ

Վարդանանցի Խորհուրդներ ՌԵՏՈՒՆԻ

Հալէպի Գործեր

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԳԻՏԱԿԱՆ ԳՐՈՆԻԿ

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

NOR AVEDAPER, B. P. 287, ALEP, SYRIE

տրուած են, որ զայն երկրագործական նպատակներու համար պիտի գործածէ երկրագործական ուսումնարաններու համար իր տեղին մէջ: (Մր. Այսլի և Մր. Փէնս այս գործին վարիչներն են ներկայիս): Վարչութիւնը իր Յունվարի նիստին մէջ յետպատերազմեան նոր պայմաններու համեմատ Գոլէճի բարեփոխելու սահմանադրութիւնը վերջին անգամ նորէն աչքէ անցուցած է եւ աւելորդ մէկ օրինակը խնամակալ Մարմինն ներկայացուցած է: Իսկ Գոլէճի մը ամբողջական ուսումնական ծրագրի պատրաստուած է, որ պիտի ներկայացուի Սուր. կառավարութեան: Վարչութիւնը մեծապէս զօր մնացած է Ամերիկայէն յայտնուած այն փափաքէն, որուն համեմատ կ'առաջարկուի այդ երկրին մէջ Ուսումնաւարտներու Միութիւն մը կազմել, և Փրօֆ. Յ. Գ. Գրիգորեանէն խնդրած է որ Թիւսաթէլֆիոյ և Նիւ Եօրքի ուսումնաւարտները այս նպատակաւ հաւաքոյթի մը հրաւիրէ: Նոյն ժողովին մէջ խորհրդակցութեան նիւթ եղած է Սուրիոյ Աւետ. Միութեան կողմէն որոշուած նոր հանգանակութեան մը ձեւնարկումը: Վարժարան կը յաճախեն 195 աշակերտներ, գիշերօթիկներու թիւն է 23: Այս տարի Աբաբերէնի և Յրանսերէնի մէջ մասնաւոր յառաջացում մը զգալի է: Մանաւանդ Ա. և Դ. կարգի աշակերտներէն զատուած մաս մը Արաբերէնի մէջ պետական ծրագրին համընթաց կ'երթան կանոնաւորապէս: Դպրոցիս բաժնիքին համար ստացուած են ելեքտրական նոր պէրրիներ, որոնք չատ լաւ կը գործեն: Ամէն երեքշաբթի և շաբաթ գիշերները բաժնիքով համերգներ կը տրուին բոլոր փափաքողներուն համար: Ուրախակալ պարագայ մըն է նաև ուսանողական ամսաթերթի հրատարակութիւնը չորս լեզուներով, Շունվարէն սկսեալ:

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԱՇԽԱՐՀԻ ՄԵԾԱԳՈՅՆ ՀԵՌԱԴԻՏԱԿ

Արդի դրութեամբ հեռագրիտակը, որ լոյսը ետ կը տուայնէ դէպի գիտուող առարկան, առաջին անգամ հնարուեցաւ Սըր Իսահակ Նեւտոնի կողմէն 1672 ին: Նեւտոնի հնարած հեռագրիտակը երկու մատնաչափ տրամագծով հայելի մ'ունէր: 1920 ին շինուեցաւ 100 մատնաչափ տրամագծով հեռագրիտակ մը, որ ներկայիս մեծագոյնն է իր տեսակին մէջ և գեանդուած է Քայիֆորնիոյ Ուիլսոն Լիւսն գիտարանին մէջ: Սոյն գիտարանի պատասխանատու վարիչը, Տր. Ճ. Հէյլի, միջոցաւ և ուրիշ շատ մը գիտնականներու գործակցութեամբ պիտի շինուի հեռագրիտակ մը 200 մատնաչափ տրամագծով և 17 ոտք տրամագիծ ունեցող հայելիով: Ասոր հայելին պիտի շինուի հալած քուարցանուն քարէ, կլիմայի փոփոխութիւններէն մանաւանդ տաքութենէն չազդուելու համար:

Այս նոր հեռագրիտակով գիտունները կը յուսան կէս միլիոն նոր աստղեր զննել, քննելով և զատորոշելով շատ մը նայուչները կազմող լուսաւոր մարմինները: Ասով կարելի պիտի ըլլայ նաև աներեակայելի հեռաւորութիւններ չափել, որ մինչև հիմա անկարելի եղած էր: 100 մատնաչափ հեռագրիտակով կարելի եղած է 840 միլիոն միլիոն միլիոն մղոն հեռու աստղերը տեսնել, որոնց լոյսը մեզի 140 միլիոն տարիէն կը հասնի: Բայց այս նոր հեռագրիտակով 5000 միլիոն միլիոն միլիոն հեռու եղող աստղերուն լուսանկարը պիտի առնուի:

Էն հետաքրքրական ծառայութիւնը զոր գիտունները կ'ակնկալեն այս հրաշալի գործիքէն, արեգակնային դրութեան մասին անոր կատարելիք յայտնութիւններէն պիտի բաղկանայ: Արեւ մոլորակները մեզի ա'յնչափ պիտի

մօտենան, որ արևի, հրաթի և երեւակի շատ մը գաղտնիքները պիտի կարենան լուծուիլ:

ԱՇԽԱՐՀԻ ՄԵՆՍԻՍՈՅՆ ՕԴԱՆԱԻԸ

Հօս Անճէլլս և Կրաֆ Չեփլին օգտնաւորը իրարմէ քիչ տարբերութեամբ մեծագոյն օգանաւորն են աշխարհի: Երկուքն ալ օժտուած են հինգական մեքենայով. Լ. Ա. ի երկարութիւնն է 658 ոտք, իսկ Կ. Չ. ինք՝ 771. Երկրորդին տրամագիծը 10 ոտք պակի երկայն է քան առաջինը:

Այս տարուան միջոցին Անգլիոյ մէջ պիտի լրանայ երկու նոր օգանաւորութիւնը իւրաքանչիւրը 5,000,000 խորանորդ ոտք ծաւալով, ասոնք պիտի խլեն առաջնութիւնը Կրաֆ Չեփլինէն: Իսկ Միացեալ Նահանգներու մէջ պիտի շինուի ուրիշ երկու օգանաւոր, Կրաֆ Չեփլինի ճիշդ կրկին ծաւալով. մէկը պիտի լրանայ 1931 ին իսկ երկրորդը 1932 ին: Այս Ամերիկեան օգանաւորը պիտի ունենան 785 ոտք երկայնութիւն, 132.9 ոտք տրամագիծ, 6,500,000 խորանորդ ոտք ծաւալ, ութը մեքենայ: Ասոնք պիտի գործածեն հէյլուս փոխանակ պայթուցիկ ջրածինի, և ծանր իւր փոխանակ կապոյիմի: Ասոնք սաւառնակներու մասնաւոր տեղ մը պիտի ունենան, ուսկից հինգ սաւառնակներ պիտի կրնան թռիչք տոնել:

ՀԷԼԷՈՒՄԻ ԿԱԶԻՆ ՄԷԿ ՆՈՐ

ԳՈՐԾՍԾՈՒԹԻՒՆԸ

Ծոգուն խորութիւնները սուզողները ապէ՛ վերջը պիտի կրնան մի քանի անգամ աւելի արագ մինչև 600 ոտք խորը սուզիլ եւ ջուրին մակերեսը ելլել նոր վիշտի մը միջոցաւ: Օգին բազկապուցիչ տարրերէն բոլակածինը կը հանին և զայն կը փոխանակեն հէլիումի կազով, որուն մասնիկները բոլակածինի մասնիկներէն փոքր ըլլալուն համար արեւան մէջ աւելի շուտ կը ծծուին եւ աւելի

շուտ թաքերէն դուրս կ'ելլեն. այս կերպով 200 ոտք ջուրի խորութիւնէն փոխանակ երկու ժամէն միայն կէս ժամ, կարելի կըլայ վեր ելլել:

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՀՐԱՇՈՒՐ

Լուսանկարչական նոր մեքենայ մը հնարուած է, որով կարելի է ունէ առարկային տարբեր կողմերը ցուցնող նկարներ ստանալ: Այս քամարայով առնուած մարդու լուսանկար մը եթէ ճակատէն զիտես պիտի տեսնես անոր զլուխը, իսկ եթէ կողմնակի զիտես պիտի տեսնես անոր մէկ երեսը:

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ԱՒԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ՊՏՈՅՏ

Վեր. Ս. Մանուկեան Յունուար ամսուան մէջ այցելեց Ազէքսանդրէթի շրջանին չորս եկեղեցիները: Ազէքսանդրէթի մէջ երկու շաբաթ ամէն գիշեր աղօթաժողովներ կատարած, Մնունդի արգիւ քարոզած, երկու պատիկներ մը կըրտուած, ինը նոր անդամներ ընդունած է, որոնցմէ երկու սափրիչներ նիւթական ծանր վնասը աննկատ թողլով իրենց խանութները չեն բանար կիրակիները: Հանդէսներ սարքուած են Երեցական և Ժողովական եկեղեցիներու Կ. Դպրոցներու կողմանէ: Ֆարթըսի մէջ անցուած մէկ գիշերուան միջոցին երկու նոր անդամներ ընդունուած են:

Պէլլանի եկեղեցին մէջ, որուն առժամայ քարոզիչն է Տիար Յովհ. Շնորհօքեան, ութը նոր անդամներ ընդունուած, չորս անդամներ իրենց ուխտը նորոգած, մէկ մկրտութիւն կատարուած է: Եկեղեցին հոգեւոր մակարդակը սկսած է բարձրանալ:

Գըրըզխանի մէջ մէկ նոր անդամ ընդունուած և վեց պատիկներ մկրտուած են: Հոս եկեղեցին ցաւալի կորուստ մը ունեցած է յանձին Տիար Գէորգ Ճիւլէքեանի, սիրուած ժամկոչին, որուն

մահը ամենուն ցաւ պատճառած է: Կենդանի, օրինակելի քրիստոնեայ կեանք մ'ապրած էր հանգուցեալը:

ՏԻԿ. ՄԷՆՆՈՒՇ ԶԷՊԷՃԵԱՆ

Այլի Տիկ. Մ. Զէպէճեան, կիրն հանգուցեալ Յովհ. Զէպէճեանի, իր մահ-կանացուն կնքեց իր որդւոյն Տոքթ. Ա. Զէպէճեանի բնակարանը, Հալէպ, Փետր. 7 ին, իրիկուան ժամը 6.30 ին, Փետր. 4 ին պատահած կաթուածին իբր արգիւնքը: Տիկ. Մ. Զէպէճեան ծնած է 1849 ին, Այնթապ, ուր Ամերիկեան Աղ-ջըկանց Աէմինէրի երկրորդ տարւան շրջանաւարտներէն եղած, 17րդ. տարիքին մէջ ամուսնացած է Տիար Յ. Զէպէճեանի հետ, մայրը եղած է 10 զաւակներու, որոնցմէ ներկայիս ունի 13 թոռներ: Յիսունը հինգ երկար տարիներ, մինչև 1920, իր էրկանը հետ ամուսնական երջանիկ կեանք ապրած է, ըլլալով օրինակելի ամուսին մը եւ արպար մայր մը: Կանուխէն շուշուցած է կրօնասիրական միտումներ, 16 տարեկանին ունեցեր է դարձի փորձառութիւնը, 40 ին սկսած է աւետարանչական զործունէութեան: Երկար առէն Կ. Դպրոցի վարժուհի, Ս. Գրքի կանոնաւոր ընթերցող մը եւ շերմեռանդ աղօթող մ'եղած է: Իր իսկ ձեռքովը հիւսած 30 ի չափ ասեղնազործի կտորներ ծախած է անոնց փոխարժէքը տեւտարանչական նպատակներու զործածելու համար: Իր բարեմասնութիւններէն եղած է նաեւ տեւական կանոնաւորութիւն՝ համեմուած սերժարոյր համերու-թեամբ եւ քաղցրութեամբ:

Յուզարկաւորութեան հանգէսը կատարուեցաւ Արիզիէի Հայ. Աւետ. Եկեղեցիին մէջ, Փետր. 8 ին, խառն բաղմութեան մը ներկայութեան: Դամբանականներ խօսեցան Վեր. Կ. Յ. Յարութեան, Վեր. Ս. Մանուկեան եւ Տօղթ. Ճ. Է. Մէրըլ: Մեր ցաւակցութիւնները հանգուցեալին պարագաներուն:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ԻՐԱՆՃԱՐ ՊԱՊՈՒԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Պապու իր զպրոցը շարունակեց. ի սկզբան թէև մեծ զժուարութիւններ ունեցաւ, բայց երթալով վարժուեցաւ, և քիչ շատ բարեփոխուելու: Տասուերկու տարեկան եղած ատենը կապերտի զոյժտարանը գրուեցաւ, ուր իր բանտի փորձառութեան շնորհիւ արագ արագ յառաջգիմեց: Օրական 25 սէնթ վարձք կ'ստանար. ու ասիկայ իշխանական կոչուելու չափ մեծ բան մ'էր Պապուի համար: Ժամանակ մը այսպէս շարունակելէ վերջ գիշերային դպրոց գնաց, և հոն սքառութ (արի) եղաւ: Զինքը ազատող սանկարը սքառութ աղոց պեան էր. և երբեք վաղանցի օրերը ան կ'առնէր սքառութ տղայքը ու երկար պտոյտներու կը տանէր զանոնք. հոն շատ հետաքրքրական տեղեկութիւններ կուտար անոնց թոշուններու, ծառերու, ծաղիկներու, կենդանիներու, և օձերու մասին: Պապու ամենէն շատ կ'ուրախանար երբ անատոին մէջ մեծ կրակ մը կը վառէին, ու անոր շուրջը նստած իրարու պատմութիւններ կը պատմէին, երգեր կ'երգէին, կը խաղային ու այլ և այլ կերպերով կ'գրօսնուին: Պապու ստափճանարար կը փոխուէր. կեանքի նոր տեսակէտներ ու փափաքներ ունենալ կ'սկսէր. աւելի պարկեշտ էր և հաւատարիմ. ու իր սանկար գոհ ընելը իր մեծագոյն փառասիրութիւնն էր: Անգամ մը երբ իր սքառութ ընկերներէն մին իր ծուռկը վնասած էր, Պապու շաղկեց գոյն և ֆեկիհն մինչև տուն բերաւ իր կռնակին վրայ: Սանկար այդ ըրածին համար զովից գինքը, «կեցցէ՛, Պապու», զուն լաւ սքառութ մըն ես,» ըսելով: Այդ գիշեր Պապու ուրախութենէն չը կրցաւ քնանալ, որովհետև Սանկար գինք «լաւ սքառութ» կոչած էր:

Պապու տասներեօթ տարեկան եղած

ատեն իր կեանքին ամենամեծ փող հու-
թիւնը ունեցաւ: Իր հեռաւոր ազգա-
կաններէն մին, Մալիա, որ միւսին
գիւղը կը բնակէր, զինքը առանձին առ-
կիւն մը տանելով՝ իրենց ցեղային եր-
գումը կատարել տուաւ իրեն, այսինքն
Պապուլի խոստումընէլ տուաւ որ յա-
նուն իրենց ցեղի աստուածներուն իր-
վտահաճած ուէ գաղտնիք ուրիշին
պիտի տայ:

Յայնժամ Մալիա ձայնը ցածցնելով
ըսաւ Պապուլին. — «Պապուլ, քեզի խիտ
կարեւոր խօսելիք մը ունիմ, և այս
կեանքէն ձանձրացայ. ինչ է մեր կեան-
քը, գործէ՛, գործէ՛, գործէ՛, և վար-
ձատրութիւն... ոչինչ: Եթէ ասանկ
երթայ, մարդ ըլլալիք չունինք. ինչո՞ւ
համակերպինք ասանկ ստրկութեան մը,
երբ երկու ժամուան ծանր աշխատան-
քով մը կրնանք մէկէն հարստանալ:
Հիմայ, ինծի նայէ», և ան գողութեան
առաջարկ մը ներկայացուց Պապուլին
ճիշտ նման այն գէպքին՝ որ Պապուլին
բանտարկութեան պատճառ եղած էր
անցելոյն մէջ — Անանտիուրի դատա-
ւորին տունը մտնել և գոհարեղէնները
գողնալ, — գլխաւոր պահակը փոքր կա-
շառքի մը փոխարէն խոստացած էր ար-
դէն օգնել իրենց գոհարեղէններուն տե-
ղը ցուցնելու. մասնաւոր գիշեր մը դա-
տաւորը ընտանեօք պարահանդէս պիտի
երթար, ամեն բան նպաստաւոր էր, ու
յաջողութիւնը ապահով:

«Սակայն անունները կարգացուելէն
ետքը, երբ դռները գոցուած են ինչպէ՞ս
գիշերանց դուրս պիտի կրնաս ելլել»,
հարցուց Պապուլ:

«Որոք պարզ է», պատասխանեց Մա-
լիա, «երկաթ թիւերը կտրող գործիք մը
ձեռք ձգած եմ, կէս գիշերէն ժամ մա-
ռաջ, երբ ամէն բան լուռ է, հետք կ'իւ-
լինք, մինչև թիւերու ցանկապատը
կ'երթանք, ոչ ոք կը տեսնէ մեզ հոն, թի-
ւերը կը կտրտեմ, դուրս կ'ելլենք, քա-

ղաք կ'իջնենք, դատաւորին տունը կը
մտնենք, տանիլ կրցածնուս չափ կ'առ-
նենք: Գետակին եղերքը ծառի մը տակ
կը թաղենք զայն: Թաղելիք տեղերնիս
առաջուց պատրաստած եմ արգէն: Ան-
կէ ետքը կամայ մը կուգանք մեր եղած
տեղէն ներս կը մտնենք, անկողիննիս կը
հասնինք ու կը քնանանք: Առաւօտուն
կտրուած թիւը սմանց ուշադրութիւնը
կրնայ գրաւել. ո՞վ պիտի ըսէ թէ մենք
էինք դուրս ելլողները. ո՛չ ոք: Մէկ
երկու ամիս վերջ՝ երբ ամեն բան մոռ-
ցուի, օր մը թաղած գանձերնիս կը հա-
նենք, կը ծախենք, և մինչև մեր կեան-
քին վերջը մեզի բաւելու չափ մեծ հա-
րսութեան մը տէրը կ'ըլլանք»:

(Շարունակելի)

ՓՈԽԱՆ ԸՆԿԱՆԱԳՐԻ

(Ի հաշիւ 1929ի բաժնեգիրնին)

Միս Փէթրըսէն, Հալէպ, 37.5 զրշ.
արծթ., Տիկ. Կիւլենիա Սաչերեանէ,
Լօս Անճէլօս, 1.50 տոլար, Տիար Ներ-
սէս Կիւլէլիմեանէ, Գահիրէ, 30 զրշ.
եզպ., Տօքթ. Վարդան Փօլատեանէ,
Հալէպ, 85 զրշ. արծթ., Տիար Յակոբ
Սարմանտեանէ, Մօնթէվիտօ, 1.0 տոլ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՐԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Կրօնիկն Հիւրք ՏՐ. Ճ. Է. ՄԷՐԸԼ
Բանաստեղծութիւն եւ Աւես. Շարժում
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Ընթանիք՝ Սիրոյ Գպրոց.

ԹՐԳ. Վ. ՊԵԿԵԱՆ

Հալիպ ՓՐՕՖ. Զ. Ա. ՊԵՋՃԵԱՆ

Մովսէս ուրն՝ առաւ Օրհնիք

ՎԵՐ. ՅԿԲ. ՇՆՈՐՀՕՔԵԱՆ

Վարդանաթի Խորհուրդներ ՌԵՏՈՒՆԻ

Հալիպի Գոյեմը ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

NOR AVEDAPER, B. P. 287, ALEP, SYRIE